Պարույր Սևակ

Որդուս

Ինձ հետ լինի, թե առանց ինձ, իմ բալիկս, կմեծանաս,
Իմ օգնությամբ, թե առանց ինձ, դու երբևէ կհասկանաս,
Թե ոնց պիտի ապրել կյանքում, թե ոնց պիտի նայել կյանքին,
Թե աշխարհում ինչն է էժան, թե աշխարհում ինչն է անգին:
Ինքս էլ խրատ կարդացողին ոչ հարգում եմ, ոչ հանդուրժում,
Տափակ թե սուր քարոզներից ինքս էլ եմ միշտ, տղաս, խորշում:
Ու թե հիմա, իմ բալիկը, ես քո գլխին ճառ եմ կարդում,
Ապա միայն նրա համար, որ շատ հաճախ կյանքում մարդու
Եթե իր մեծ բաժինն ունի ժամանակը, ինքը դարը,
Բայց և այնպես քիչ չի ազդում նաև ընտրած ճանապարհը:
Գուցե քեզ հետ նույնը լինի, որ պատել է հաճախ ինձ է՛լ.
Հաճախ, շուրջը աչք ածելով, այն մարդկանց եմ ես նախանձել,
Որոնց կյանքը հեշտ է անցնում - ասես կյա՛նք չէ, այլ խճուղի՝
Անխոչընդո՛տ և անարգելք, քանոնի պես հա՛րթ ու ուղիղ.
Դպրոց, հետո ինչ-որ մի ԲՈՒՀ, մի ազդեցիկ զանգահարող,-
Եվ տաք տեղն է ապահովված… Այսպես ապրել դու չե՛ս կարող:
Չէի ուզի, որ քո կյանքը հարթ խճուղու նման լիներ:
Դու մի՛ անցիր ասֆալտ ճամփով, գերադասիր ճամփա՛ շինել:
*
Դու սիրո հետ միշտ հաշտ ապրիր, բայց խույս մի տա տառապանքից.
Նա սրբում է աչքը փոշուց, նա մաքրում է հոգին ժանգից:

Տառապանքից չեն մեռնում, չէ՛, այլ ավելի են պնդանում,-
Ապաքինված սիրտը հետո գալիք ցավը հեշտ է տանում:
Ա՛խ, մի՛ նվա: Հայրըդ երբեք չէր հանդուրժում նվացողին...
Շատ ավելի լավ է, տղա՛ս, դառն արցունքով աչքըդ ցողիր
Ու քո ճամփան շարունակիր: Թո՛ղ որ լինի նա քարքարոտ,
Բայց քո հոգում եթե լինի բարո՛ւ, լավի՛, սիրո՛ կարոտ,
Դու չե՛ս հոգնի, դու կքայլես, կբարձրանաս դու սարն ի վեր:
Դրա համար ոգի է պետք, դրա համար պետք չեն թևեր:
*
Ազնիվ եղիր ամեն ինչում - ո՞վ է կյանքում սովից մեռել:
Ճշտի համար աքսոր չկա - ստի հանդեպ ինչո՞ւ լռել:
Իսկ մեր շուրջը դեռ կան մարդիկ, որ երբ պետք է մեջք են ծռում,
Երբ որ պետք է հռհռում են, պե՞տք է՝ ժպտո՛ւմ, պե՞տք է՝ լռո՛ւմ,
Պե՞տք է՝ իրենց մատն են տնկում... Դու մի եղիր կյանքում տհաս՝
Դու հասկացիր հենց այս գլխից, մի մոռացիր երբեք, տղա՛ս.
Ազնըվությունն այն է միայն, որ չի փոխվում՝ ոնց էլ շուռ տաս,-
Նա մի ճերմակ երես ունի, ոչ թե յոթ-ութ գունեղ աստառ...
*
Մի՛ տրտնջա: Դու հիշո՞ւմ ես. «Ձախորդ օրեր… կուգան-կերթան»…
Մի՛ տրտնջա: Եթե լավից ետ ես ընկել՝ ինքդ հասիր…
Մի՛ տրտնջա, բայց և կյանքը գրքի նման դու մի կարդա,
Գրքի նման՝ քեզնից հեռու, ինչ-որ օտար մարդկանց մասին…
Հպարտ եղիր, բայց ոչ գոռոզ (դատարկ մարդն է գոռոզանում,
Հայրդ խելոք ու տխմարին դրանով էր զանազանում):
Հորըդ նման հպարտ զգա, որ ոչ մեկի տուն չես քանդել,
Ոչ մի ազնիվ խոսք չես կտրել, ոչ մի ազնիվ միտք չես բանտել,
Որ շիտակ ես քայլել կյանքում և լռել ես եթե հաճախ,
Ապա միայն նրա համար, որ առևտուրը մանրածախ
Հաճախ միայն զիգի-բիզի զանգուլակ է նետել շուկա,
Իսկ դու զուրկ ես զիգի-բիզուց, կեղծ դրամ էլ մոտըդ չկա…

*

Դու փոքր ես դեռ, դեռ չգիտես, թե ոնց պիտի կյանքին նայել:
Դու փոքր ես դեռ: Երբ մեծանաս, դառնաս արդեն հասուն ջահել,
Խորհուրդներն իմ և՛ հնացած, և՛ ավելորդ թվան գուցե-
Կյանքում այնժամ էլ չլինեն նման բացեր, նման խոցեր:
Է՛հ, տա աստված: Ես էլ կյանքում ուրիշ ոչինչ չեմ երազում
(Կույրը, տղաս, ինչպես գիտես, երկու աչք է միայն ուզում):
Խորհուրդներն իմ թող հնանան... Ծաղիկն է լոկ այդպես մեռնում,
Երբ ամռանը ծառի վրա հասուն միրգ է արդեն դառնում:
Հանուն գալիք վառ խարույկի ես պատրաստ եմ այսօր ծխալ,
Հանուն վաղվա ճշմարտության թող որ այսօր լինեմ սխալ...

24.II.1955թ. 28.I.1956թ.
Մոսկվա